ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան
20.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/16

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «Էն Շին» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի /լիազորագիր տրված՝ 30.04.2019թ./

Քննելով Չարենցավանի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար Չարենցավանի համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Էն Շին» ՍՊԸ-ի (հետայսու նաև՝ Ընկերություն) կողմից 26.04.2019թ. ներկայացված և 29.04.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/16 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **«ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԷՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն 26.04.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալ.

«Չարենցավան համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էն Շին» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «Էն Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 137 000 ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից «Էն Շին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու հիմքով:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի

մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էն Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 137 000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընկերությունը հայտնել է, որ «Էն Շին» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Ընկերությունը նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Ընկերությունը հայտնել է, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «Էն Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ

հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ Ընկերության միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և «Էն Շին» ՍՊԸ-ի հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Ընկերությունը հայտնել է, որ որևիցե եղանակով երբևիցե չի ծանուցվել ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով առկա պարտավորության առկայության մասին: Փաստացիորեն առկա է եղել արձանագրված պարտավորության մասով «Էն Շին» ՍՊԸ-ի իրազեկված չլինելու հանգամանքը, քանզի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ կարող էր ստանալ միայն «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի»-ից, իսկ ինչպես արդեն նշվել է, նշված քարտի տվյալների համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրը չունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն:

Ընկերությունը գտնում է, որ նման դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Էն Շին» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ...:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է դադարեցնել Չարենցավանի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Էն Շին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

«Էն Շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.05.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Չարենցավանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Չարենցավանի համայնքապետարանը ԳԲՔԱ-ՆԳ-2019/16 բողոքի շրջանակներում հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «Էն Շին» ՍՊԸ-ի կողմից 26.04.2019թ. ներկայացված բողոքը, գտնում է, որ «Էն Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հաշվի առնելով ստորև ներկայացված հիմնավորումները՝

1. ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 11.04.2019թ. «Էն Շին» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ:

2. ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. նիստի արձանագրության թիվ 3 որոշմամբ «Էն Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից ընթացակարգի 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով:

3. ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. նիստի արձանագրության թիվ 3 որոշմամբ, առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների, այդ թվում նաև «Էն Շին» ՍՊԸ-ի համապատասխան տվյալները հարցման տեսքով 16.04.2019թ. ներկայացվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի

«ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

4. Հարցման շրջանակներում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից 19.04.2019թ. ստացված տեղեկատվության համաձայն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Էն Շին» ՍՊԸ-ի ժամկետանց պարտավորությունները կազմել են 137 000 (մեկ հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամ:

5. Հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ՁՀ-ԳՀԱՇՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.04.2019թ. նիստի արձանագրության թիվ 4 որոշմամբ, «Էն Շին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Հայտի մերժման իրավական հիմքերը՝

1. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

2. Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4. Նույն կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.

5. ՀՀ-ԳՀԱՇՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.1 ենթակետի 2-րդ պարբերությամբ սահմանված է՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

6. ՀՀ-ԳՀԱՇՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 16.04.2019թ. ՀՀ կառավարությանն առընթեր

պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման տեքստում սահմանված է՝ խնդրում ենք ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել տեղեկատվություն 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ նույն կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

7. ՁՀ-ԳՀԱՇՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 7-րդ հավելվածով սահմանված է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևաչափը, համաձայն որի տեղեկատվությունը տրամադրվում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափի վերավերյալ:

8. «Էն Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից ընթացակարգի 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով, որոնց համար ներկայացված գնային առաջարկները համապատասխանաբար կազմում են 1 638 000 (մեկ միլիոն վեց հարյուր երեսունութ հազար), 3 384 000 (երեք միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ: Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվության, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Էն Շին» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը կազմում է 137000 (մեկ հարյուր երեսունյոթ հազար) ՀՀ դրամ, որը գերազանցում է հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը:

9. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով չի սահմանվում դրոշմանիշային վճարը՝ որպես բացառություն»:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն խնդրել է «Էն Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.05.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2019/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Չարենցավանի համայնքապետարանի կողմից Չարենցավանի համայնքապետարանի կարիքների համար Չարենցավանի համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***11.04.2019թ.*** հայտ է ներկայացրել «Էն Շին» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը 1-ին չափաբաժնի մասով կազմել է 1 638 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ 3 384 000 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էն Շին» ՍՊԸ-ն:

4. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Էն Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 137 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.04.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, մերժել է «Էն Շին» ՍՊԸ-ի հայտը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Էն Շին» ՍՊԸ-ի 26.04.2019թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, Չարենցավանի համայնքապետարանի 07.05.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի

և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: ***<u>Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը</u>***

չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Չարենցավանի համայնքապետարանի կողմից Չարենցավանի համայնքապետարանի կարիքների համար Չարենցավանի համայնքի փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***11.04.2019թ.*** հայտ է ներկայացրել «Էն Շին» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը 1-ին չափաբաժնի մասով կազմել է 1 638 000 ՀՀ դրամ, իսկ 2-րդ չափաբաժնի մասով՝ 3 384 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էն Շին» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.04.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մերժել է «Էն Շին» ՍՊԸ-ի հայտը, հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 19.04.2019թ. տրամադրված եզրակացությունը, որի համաձայն՝ ***«Էն Շին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն (137 000 ՀՀ դրամ) մինչդեռ՝ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:***

Այսպիսով՝ Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած ***հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:***

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «Էն Շին» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է իրականությանը չհամապատասխանող, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Այսպիսով, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, առաջնորդվել Կարգի 44-րդ կետի պահանջներով, մերժելով Ընկերության հայտը գործել է իրավաչափ:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացրել է 11.04.2019թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, որում արտացոլված չէ դրոշմանիշային վճարի գծով պարտավորությունը: Միաժամանակ ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 02.05.2019թ. տրված թիվ 829 տեղեկանքը, առ այն, որ 11.04.2019թ. դրությամբ Ընկերությունը ունի 137 000 ՀՀ դրամ դրոշմանիշային վճարի մասով պարտավորություն:

Վերոգրյալով պայմանավորված հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ համաձայն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հանդիսանում է հարկային եկամուտ և հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Էն Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Էն Շին» ՍՊԸ-ի կողմից 26.04.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**